/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

•Գործուղված անձինք
ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) նախագահ՝ Ս. Մնացականյան

•Երկիր/քաղաք/ ժամկետ
Շվեյցարիա/Ժնև/14.02.-17.02.2023թ.

▪Նպատակը
ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստ

▪ Քննարկված թեմաները
Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (ԵՎԿ) Բյուրոյի (Ս. Մնացականյանը հանդիսանում է Բյուրոյի փոխնախագահ) հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.
I. Բացումը Պադրաիգ Դալթոնի կողմից (Բյուրոյի նախագահ)
II. Ընտրված վիճակագրական բնագավառների խորացված վերանայումներ
ա. Դժվար հասանելի խմբեր վարչական աղբյուրներում - քննարկման և առաջարկությունների համար
բ. Բարեկեցության չափում – քննարկման և առաջարկությունների համար
գ. Սոցիալական համախմբվածություն – քննարկման և առաջարկությունների համար
դ. 2023-2024 թթ. և ԵՎԿ-ի 2023թ լիագումար նստաշրջանում խորացված վերանայման թեմաների ընտրություն – քննարկման համար
III. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) վիճակագրական աշխատանքներ և Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի մասնագետների թիմեր
ա. Զբաղվածության որակ – քննարկման համար
բ. Միգրացիայի վիճակագրություն – քննարկման համար
գ. Շրջակա միջավայրի վիճակագրության և ցուցանիշների համատեղ աշխատանքային խումբ – քննարկման համար
դ. Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացում – քննարկման համար
ե. Մասնավոր տվյալների հասանելիություն (առաջարկ) – քննարկման համար
IV. Ռազմավարական զարգացումները Պաշտոնական վիճակագրությունում – 2022թ. հոկտեմբերին կայացած քննարկման շարունակություն – քննարկման և առաջարկությունների համար
V. 2023թ. ԵՎԿ-ի լիագումար նստաշրջանի նախապատրաստում

ա. Տվյալների էթիկայի վերաբերյալ սեմինար - քննարկման և առաջարկությունների համար
բ. ԵՎԿ-ի երկրորդ սեմինարի նիստ – քննարկման համար
գ. 2023թ. ԵՎԿ-ի լիագումար նստաշրջանի նախնական օրակարգ և ժամանակացույց – քննարկման համար
VI. ԵՎԿ-ի ուղեցույցներ և առաջարկություններ 2023 թ. հաստատման համար
ա. Պաշտոնական վիճակագրության հիմնական արժեքները - քննարկման համար
բ. Տվյալների կառավարում – քննարկման համար
գ. Շրջանաձև տնտեսության չափում – քննարկման համար
դ. Վտանգավոր իրադարձություններ և աղետներ – քննարկման համար
VII. ՄԱԿ ԵՏՀ-ի վիճակագրական ծրագրերի աշխատանքային փաստաթղթեր– քննարկման համար
VIII. Հաջորդ հանդիպումների ժամկետներն ու վայրերը – քննարկման համար
IX. Այլ հարցեր:

Հայաստանը հանդես եկավ ելույթներով «Դժվար հասանելի խմբեր վարչական աղբյուրներում», «Բարեկեցության չափում», «Զբաղվածության որակ», «Միգրացիայի վիճակագրություն թեմաներով», «Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացում» թեմաներով:

Ս. Մնացականյանը «Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացում» թեմայի ներքո տեղեկացրեց, որ 2022 թ. հոկտեմբերի 18-20-ը փորձագետների միջազգային թիմը ՄԱԿ ԵՏՀ-ից, Իտալիայից և Հունգարիայից իրականացրել է Հայաստանում Վիճակագրական կազմակերպությունների ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) իրականացման ոլորտային գնահատում: Գնահատման վերաբերյալ հաշվետվությունը զետեղված է ՄԱԿ ԵՏՀ-ի կայքում՝ GAMSO-ի Ռեսուրսների շտեմարանում (https://unece.org/sites/default/files/2022-11/GAMSO%20Sector%20Review%20Armenia%20Report.pdf):

Մոլդովայի վիճակագրության ղեկավարի տեղակալը միացել էր գնահատման թիմին որպես դիտորդ՝ Հայաստանի փորձն ուսումնասիրելու նպատակով:

Դա Հայաստանում պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացմանն ուղղված ավելի լայն աշխատանքի մի մասն էր՝ համաձայն Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման ՄԱԿ ԵՏՀ-ի բարձր մակարդակի խմբի կողմից մշակված չափանիշներին և լավագույն փորձին: Արմստատը խնդրել էր ՄԱԿ ԵՏՀ-ի թիմին գնահատել կատարված աշխատանքը և օժանդակել Արմստատին բացահայտելու GAMSO-ի իրականացման հնարավոր հաջորդ քայլերը և առաջարկություններ ներկայացնել նշյալ աշխատանքին աջակցելու համար՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա:

Մինչ փորձագիտական առաքելությունն Արմստատը փաստաթուղթ էր պատրաստել և քարտեզագրել իր գործունեությունը GAMSO-ի համաձայն: Գնահատման թիմը ներկայացրել է առաջարկություններ և մշակել ճանապարհային քարտեզ՝ առաջ ընթանալու համար (https://armstat.am/file/doc/99533528.pdf):

▪Արդյունքները

Մասնակցությունը Բյուրոյի նիստին հնարավորություն ընձեռեց Բյուրոյի անդամի պարտականությունների կատարմանը, ինչպես նաև քննարկելու և ծանոթանալու վիճակագրության տարբեր ոլորտների մշակման, վարման և տարածման արդի փորձին, վերջին զարգացումներին, ուղեցույցներին և առաջարկություններին, պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացումներին, ներկայացնելու Հայաստանի փորձը, ինչպես նաև ամրապնդելու վիճակագրական ներուժն ու մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը:

▪ Նշումներ

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան